



20 (175). ԼԱԿԼԸԿՈՒ ՀԵՔԻԱԹ

Ո՛ր գինա, ըդի մինակ աստված դինա, քա՛նի հազար տարի
չառեջ, մարդիկ ու հավքեր հրտ յիրար կապրեն, հավքեր ընդոց
ափից կուտ կուտեն, մարդու մտքով չըր յընցնի՝ բռնեք ղհավք,
մորթեք, միսն ուտեք:

Ժամանակ մե գրնցնա՝ մարդու մեկ կը մորի մրջ մեշին, իրեք
օր կը մնա անոթի, օր չը մեռնի անոթնն՝ հավք մե կը բռնե, կը
մորթե կուտե, ուժ գիկա վրեն, մեշից գելնա դուս, դիկա հասնի գեղ,
ախշրով-ախշար կը ձենձընե.

— Ըստուց դեն՝ հավքու միս կերեք, էդ մսեն համով միս չկա:
էդ օրվրեն, կըսին, մարդիկ զհավքեր կը բռնին, մորթին կու-
տին:

Կակլակն օր էդ բան դիմնա, մրջ ուրին կը մտածե. «Ա՛րի
դմարդ խարիմ՝ կանիմ վրր իմ մեկ յոտքին, ընի չի՛մնա՝ հավք իմ,
կը թողե կէրթա, ես ընձի աղատ կապրիմ»:

Օղորդ օր՝ կը կանի մեկ յոտքին: Նեճիրվան օր գիկա, կը տես-
նա՝ հանդե լակլակ կաներ է մեկ յոտքին, կը մտածե. «Ըդի ո՛չ հավք
է, ո՛չ ուրիշ բան, չորի՞ն դարկիմ», կը թողե ղլակլակ, կէրթա:

Կակլակն ուրախ-ուրախ կըսե.

— Աղե՛կ խարի դմարդ:

Ուրիշ օր մե նեճիրվան էլման դիկա, կը տեսնա՝ հանդե ուր
տեսած լակլակ կը քելե մրջ շամբին, յընկեր է գորտի մե յետու,
դուզե բռնե ուտե, կը մտածե. «Ըհը՛ ըդրա փրուզեն լե րացվավ,
քգի լե հավք է, կանի նեճիր էնիմ, տանիմ՝ էրեխեք միս ուտին»:
Կըսե, կը քաշե զթվանք օր դարկե, աստծու հրամանով լակլակ լե-
վու կառնե, կըսե.

— Ես զպուն լակլակն իմ, ո՛ն ընձի սպանե՛ ուր էրեխեք կը մեռնին:

Մարդն էդ խոսքից կը զարզընդի, զթվանք կը թալե փեջ, կը մաաժն ուրին-ուրին. «Ձա՛նըմ, ըդի էրևութք էր էրևաց, ըդի ո՛չ հավք է, ո՛չ ուրիշ բան», կըսե, կը թողե կէրթա:

Լակլակն ուրախ-ուրախ կըսե.

— Ես խլավ լակլակն իմ, ո՛ն ընձի բոնե ուտե՛ քանիմ՝ օր կուշտ կէզնի:

էդ օրվրնե, ո՛ր դինա, ըդի մինակ աստված դինա, քա՛նի հազար տարի է չընցի, լակլակն օսչաթ է էրի գալոց լակլըկնեբուն, օր կանին մեկ յոտքին. էդ յապով լակլակ կը կանի մեկ յոտքին:

